Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 28-ի N 489 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) ստորաբաժանումներում գրանցված և (կամ) հաշվառված, ինչպես նաև գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների՝ հաշվառման տվյալների փոփոխությամբ վերասարքավորման թույլտվություն տալու հետ կապված հարաբերությունները:

2. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (լիազորված անձը) տրանսպորտային միջոցի վերասարքավորման թույլտվություն ստանալու համար ճանապարհային ոստիկանություն է ներկայացնում դիմում և տրանսպորտային միջոցի վերասարքավորման թույլտվություն տալու համար օրենքով նախատեսված վճարի վճարման փաստը հավաստող փաստաթուղթ:

3. Դիմումում նշվում են տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը, տրանսպորտային միջոցի հաշվառման տվյալները, ինչպես նաև տեղեկություններ կատարվող վերասարքավորման մասին:

4. Դիմումին կից ներկայացվում են տրանսպորտային միջոցի ամբողջական տեսքի և հանգույցների լուսանկարները, գծապատկերները (էսքիզներ կամ գծագրեր), ինչպես նաև տեղեկություններ վերասարքավորման ժամանակ օգտագործվող հանգույցների, առարկաների, սարքավորումների և նյութերի մասին:

5. Պահանջվող տեղեկությունները կամ փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում անձին տրվում է 5-օրյա ժամկետ՝ փաստաթղթերն ամբողջությամբ ներկայացնելու համար:

6. Դիմումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում ճանապարհային ոստիկանությունում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) տրանսպորտային միջոցի վերասարքավորման թույլտվություն տալու մասին.

2) տրանսպորտային միջոցի վերասարքավորման թույլտվություն տալը մերժելու մասին:

7. Տրանսպորտային միջոցների վերասարքավորման թույլտվություն տալը մերժվում է, եթե՝

1) վերասարքավորման արդյունքում կարող են խախտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկի կամ վերասարքավորման ժամանակ իրականացման ենթակա տեխնիկական պայմանների պահանջները.

2) անձը սույն կարգի 5-րդ կետով սահմանված ժամկետում չի ներկայացնում կամ թերի է ներկայացնում պահանջվող տեղեկությունները կամ փաստաթղթերը.

3) տրանսպորտային միջոցը կամ դրա համարակիր մասերից մեկը գտնվում է հետախուզման մեջ:

8. Սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված որոշումից երկու (երկրորդ օրինակը նախատեսված է տրանսպորտային միջոցը հաշվառման ստորաբաժանում ներկայացնելու համար), իսկ 2-րդ ենթակետով նախատեսված որոշումից մեկ օրինակ տրվում (ուղարկվում) են դիմումատուին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 28-ի N 489 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՍԱՐՔԱՎՈՐՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՌՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) ստորաբաժանումներում գրանցված և (կամ) հաշվառված, ինչպես նաև գրանցման ենթակա և առանց թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցների վերահաշվառման թույլտվություն տալու հետ կապված հարաբերությունները:

2. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (լիազորված անձը) տրանսպորտային միջոցի վերահաշվառման թույլտվություն ստանալու համար ճանապարհային ոստիկանություն է ներկայացնում դիմում և տրանսպորտային միջոցի վերասարքավորման թույլտվություն տալու համար օրենքով նախատեսված վճարի վճարման փաստը հավաստող փաստաթուղթ:

3. Դիմումում նշվում են տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը, տրանսպորտային միջոցի հաշվառման տվյալները, ինչպես նաև տեղեկություններ կատարված վերասարքավորման մասին:

4. Դիմումին կից ներկայացվում են տրանսպորտային միջոցի ամբողջական տեսքի և հանգույցների լուսանկարները, գծապատկերները (էսքիզներ կամ գծագրեր), ինչպես նաև տեղեկություններ վերասարքավորման ժամանակ օգտագործված հանգույցների, առարկաների, սարքավորումների և նյութերի մասին:

5. Պահանջվող տեղեկությունները կամ փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում անձին տրվում է 5-օրյա ժամկետ՝ փաստաթղթերն ամբողջությամբ ներկայացնելու համար:

6. Դիմումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում ճանապարհային ոստիկանությունում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վերասարքավորված տրանսպորտային միջոցի վերահաշվառման թույլտվություն տալու մասին.

2) վերասարքավորված տրանսպորտային միջոցի վերահաշվառման թույլտվություն տալը մերժելու մասին:

7. Վերասարքավորված տրանսպորտային միջոցների վերահաշվառման թույլտվություն տալը մերժվում է, եթե՝

1) վերասարքավորման արդյունքում խախտվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկի կամ վերասարքավորման ժամանակ իրականացման ենթակա տեխնիկական պայմանների պահանջները.

2) անձը սույն կարգի 5-րդ կետով սահմանված ժամկետում չի ներկայացնում կամ թերի է ներկայացնում պահանջվող տեղեկությունները կամ փաստաթղթերը.

3) տրանսպորտային միջոցը կամ դրա համարակիր մասերից մեկը գտնվում է հետախուզման մեջ:

8. Սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված որոշումից երկու (երկրորդ օրինակը նախատեսված է տրանսպորտային միջոցը հաշվառման ստորաբաժանում ներկայացնելու համար), իսկ 2-րդ ենթակետով նախատեսված որոշումից մեկ օրինակ տրվում (ուղարկվում) են դիմումատուին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ